# Հայաստանի ամերիկյան համալսարանի առաջին կարեւորագույն նվաճումը հավատարմագրման գործընթացում

Իր պատմության ինը տարիների ընթացքում Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) կարեւոր մի նվաճման հասավ, երբ դպրոցների եւ քոլեջների արեւմտյան ասոցիացիա (ԴՔԱԱ) հավատարմագրման կազմակերպությունը 1999 թ. նոյեմբերին ճանաչեց հավատարմագրմանը մասնակցելու ՀԱՀ-ի թեկնածությունը: Սա հավատարմագրման գործընթացում կատարված առաջին քայլն է: Ամբողջ գործընթացը կարող է տեւել 2-5 տարի:Հավատարմագրման գործընթացը սկսվեց անցյալ տարի, երբ ՀԱՀ-ը պատրաստեց եւ ԴՔԱԱ-ին ներկայացրեց իր թեկնածության մասին մանրամասն զեկույցը: Այդ զեկույցը պատասխան էր ԴՔԱԱ-ի որակավորման 13 չափանիշներին՝ կապված համալսարանի կազմակերպչական կառուցվածքի, կրթական նպատակների, ծրագրերի, առաքելության, դասախոսական կազմի որակի, ընդունելության չափանիշների եւ ֆինանսական կայունության հետ: Զեկույցը ուսումնասիրվել է ԴՔԱԱ-ի հանձնաժողովի գլխավոր ակադեմիական անդամների, այդ թվում՝ ԴՔԱԱ-ի գործադիր փոխտնօրենի, Քալ Փոլի Փոմոնայի համալսարանի նախագահի, Քալիֆորնիայի պետական համալսարանների համակարգի պատվավոր փոխնախագահի, Մոնթերեյի Միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի գլխավոր հաշվապահ-գանձապետի եւ Սանտա Կլարայի համալսարանի ու Սան Ֆրանցիսկոյի պետական համալսարանի պրոֆեսորների կողմից: Նախքան որոշում ընդունելը, տարբեր հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով ԴՔԱԱ-ի հանձնաժողովը հանդիպեց ՀԱՀ-ի նախագահի, այլ վարչական ու ակադեմիական բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

ՀԱՀ-ի համար հավատարմագրումը չափազանց կարեւոր է, քանի որ այն ներկայացնում է համալսարանի ակադեմիական որակը, նպատակը եւ գործունեության շարունակականությունը: Մասնավորապես, հավատարմագրումը ցույց կտա, որ ՀԱՀ-ն անցել է ինտենսիվ եւ բազմակողմանի ինքնուսումնասիրության փուլը, որին հետեւել է հաստատության գործունեության գնահատումը տեղում, որ այն գործում է բարձր մակարդակով՝ համաձայն իր կողմից որդեգրված նպատակների, ունի անհրաժեշտ միջոցներ՝ գործող եւ պլանավորված ծրագրերը բավարար որակով իրականացնելու համար, պատրաստ է պարբերական ինքնագնահատման եւ նպատակամղված կառուցվածքային բարեփոխումներին եւ ԴՔԱԱ-ի հանձնաժողովի չափանիշներին, քաղաքականությանն ու ընթացակարգերին համապատասխանելուն:

ՀԱՀ-ն առաջինն է ԱՄՆ-ի սահմաններից դուրս գտնվող համալսարաններից, որն ընդգրկվում է այս գործընթացի մեջ ԴՔԱԱ-ի կողմից: